# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա**
**« 17 » ՄԱՐՏԻ 2025Թ.**

**«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԱՅԻՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Մայիս Նազարյանի հետ կնքած 2020 թվականի մարտի 16-ի N433 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Կարինե Նազարյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մայիս Նազարյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2020 թվականի մարտի 16-ի N433 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի մարտի 17-ը:
2. Կարինե Նազարյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2025 թվականի մարտի 18-ից:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 17-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**